

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Բուխարեստի Հայ Մշակութային Տան մեջ թեմական թանգարանի և գրադարանի պաշտոնական բացման առթիվ, որ տեղի է ունենալու կիրակի, 24 մայիսին, խնդրում ենք շնորհել մեզ Ձեր հայրապետական օրհնությունը:

Որդիական սիրով՝

ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆ

Բուխարեստ,
7 մայիս 1987 թ.

ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆԻՆ

Բուխարեստ

Ուրախ սրտով կողջունենք բացումը տիրախնամ թեմիդ թանգարանի և գրադարանի մայրաքաղաքիդ հայ մշակույթի շենքում:

Սուրբ Էջմիածնից հղում ենք Մեր օրհնությունը Ձեր այս աստվածահաճո իրագործումին, մաղթելով, որ Բուխարեստի հայ մշակույթի Տունը այսպիսով դառնա հայկական հոգևոր և գրական բազմադարյան արժեքների մի գանձատուն Ձերդ Սրբազնության ու Թեմական Խորհրդիդ հովանու ներքո: Մաղթում ենք Ձեզ, սիրելի Սրբազան և Ձեր գործակիցներին, աշխատելու անսպառ շինարար եռանդ, նորանոր պայծառ իրագործումներով: Այս երջանիկ առիթով առաքում ենք Մեր հայրական օրհնությունը նաև Մեզ շատ հարազատ՝ Ռումանիո լուսառատ հայրենիքի հայ հավատացյալ Մեր զավակներին հայցելով բոլորի համար Սուրբ Հոգվո շնորհները:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
11 մայիս 1987 թ.

ՎԱՂԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Խորապես տպավորված Բուխարեստի հայոց արքեպիսկոպոսարանում բացված եկեղեցական արժեքավոր հավաքածուից և Ձերդ Սրբության հեռագրից, այսու նորոգում ենք Մեր եղբայրական սիրո զգացումները Ձերդ Սրբության հանդեպ։

ԹԵՈԿՏԻՍՏ
ՊԱՏՐԻԱՐՔ ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ

Բուխարեստ,
4 հունիս 1987 թ.

Հայաստանի ՀԱՅԿ Գրադարան